Սիպիլ

Աչքերդ

Ծով մը կապույտ կը ծավալի
Աչքերուդ մեջ, ուր չըկա սեր,
Ծով մը հանդարտ, ըզմայլեի,
Ուր կը ցոլան ցայտուն լույսեր.
Բայց ըզգացումն հոն կը հալի
Ինչպես տաքին՝ պատառ մը սեր:

Երբեմն անկե կ՚անցնին բարակ
Ճառագայթներ պայծառ ու ջինջ,
Ջըղուտ հոգվույդ ցոլքեր կըրակ
Երևույթով մ՚աղվոր, անջինջ.
Բայց կը մարին անոնք արագ,
Ինչպես հովին դեմ կայծ մ՚ոչինչ:

Մերթ ծաղիկներ կ՚ըլլան փափուկ
Գորշ կապույտով մանուշակին,
Այնքան նըրբին և խուսափուկ
Որ չունին գույն որոշակի.
Բայց կը թափին ինչպես հափուկ
Դաժան շունչին դեմ խորշակի:

Օր մ՚ալ տեսնես շատ են հոնգեր
Մեծ թախծի խոհով մ՚անանց.

Արցունքներու տակ կայլակներ
Թարթիչներդ կը մաղվին թաց.
Որ կը թրվին սև ժանյակներ
Գոհարներու շարքով բանված:

Աշխարհներ են աչքերդ անհուն,
Ուր կան լույսեր, հույզեր հրսկա .
Սառույց, հրրդեհ, բոցեր փայլուն,
Ժրպիտն ու հույս չեն բացակա .
Կուգան, կ՝անցին անկե սահուն
Գութն ու արցունք . լոկ սեր չրկա: